| «Արծիւ» | Պոլիս |
| «Պոսրէգնիկ» | Բագու |
| «Արարատ» | Երևան |

# ԽՈՐՀՈՒՐԴԻ ԺՈՂՈՎՆԵՐ

1913 թւին տեղի են ունեցել 4 նիստ ժողովներ, ուր կայացել են հետեւեալ կարևոր որոշումները:

Յունուարի 21-ի նիստում որոշուել է, «Հանրային Մատենադարանը» հրատարակել տարեկան 12 գիրք, նշանակելով տարեկան բաժանորդագինը 1 ռ. 80 կ. կամ առանձին համարը 15 կոպ., իսկ «Ժողովրդական Գրադարան»-ը հրատարակել առանց բաժանորդագրութեան և այնքան համար, որքան հնարաւոր կլինի:

Մարտի 11-ի նիստում որոշուել է, որ թարգմանութիւնները պէտք է անպայման կատարուեն բնագրից, բացի մանկական, պատանեկական և ժողովրդական գրքերից, որոնք կարելի է թարգմանել և ոչ բնագրից:

Ապրիլի 8-ի նիստում Մանկական գրքերի տպագրութեան համար «ւ»-ի և «ու»-ի գործածութեան հարցում որոշուել է պահպանել այն ուղղութիւնը որը հեղինակը կամ թարգմանիչը գործ են ածել իրենց գրուածքների մէջ: Ինչ վերաբերում է այն հարցին, թէ պէ՞տք է ընդունել տպագրութեան համար արևմտեան բարբառով գրուածքներ, թէ՞ ոչ—որոշուել է այդ բարբառով տպագրել միմիայն հայրենագիտական (մեր կեանքին ու գրականութեան վերաբերեալ) և ինքնուրոյն բելլետրիստիկ գրուածքներ, մնացեալը մերժել:

## ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

### I

Փետր. 10-ին Բարեգ. Ընկ. դահլիճում պ. Տ. Յովհաննիսեանի նախագահութեամբ, Ա. Գուլօեանի քարտուղարութեամբ և 30 անդամի ներկայութեամբ տեղի ունեցաւ Հրատ. Ընկ. արտակարգ ընդ. ժողովը։ Կարդացուեց և վաւերացուեց անցեալ տարուայ հոկտ. 14-ի ընդհանուր ժողովի արձանագրութիւնը։

Անցնելով օրակարգին, ժողովը նախ քննութեան դրեց նախահաշիւը։ Վարչութեան նախագահ բժ. Զարզարեանը կարդացել ու մուտքը, որից երեւաց, որ Վարչութիւնը 1913 թուին սպասելիք 11,801 ռ. 36 կ. մուտքից 8891 ռ. յատկացնում է գրքերի հրատարակութեան և գրական հոնորարի, 200 ռ. մրցանակ, 100 ռ. պահեստի (10,000 ռ.) ապահովագրութեան, 300 ռ. Ընկերութեան օգտին կատարելիք ճամբորդութեան։ Մնացածը դիւանական, գրասենեակի ծախսեր և ծառայողների ռոճիկ։ 11,801 ռ. 36 կ. մուտքը գոյանում է՝ 1912 թուին կատարած ճամբորդութիւնից 2000 ռ., Ա. Օհանեանից—150 ռ., Պ. Օ. Ղուկասեանի գումարը—3000 ռ., սպասւում է գրքերի վաճառումից—1000 ռ., 1912 թուի հանգանակութեան ապարիկներից —500 ռ., երեկոյթ-ներկայացումներից—500 ռ., նուէրներից—500 ռ., 600 իսկական անդամներից—1800 ռ., 10 մշտական անդամներից—750 ռ., բացի սրանից, Երկրորդ Վարկի Ընկ. մէջ՝ ընթացիկ հաշւում—1318ռ. 26 կ., մնացորդ առ 1-ն յունուարի 1913 թուի—233 ռ. 10 կ., և տոկոսներ—50 ռ.։

Դիտողութիւններ արին նախահաշուի մի քանի կէտերի վերաբերմամբ. նախ ցանկութիւն արտայայտուեց և նպատակայարմար գտնուեց, որ Ընդ. ժողովի ժամանակը մօտեցուի յունուարին և նախահաշուի հետ միասին անպատճառ կարդացուի նաև անցած տարուայ հաշիւը։ Ապա՝ նուէրներից սպասելիք 500 ռուբլին, որի դիմաց ծախս է նշանակուած 300 ռ.—գտնուեց խիստ քիչ։ Գիւտ ա. ք. Աղանեան յայտնեց, որ անցեալ տարուայ նման ճամբորդութիւն կատարելու համար 300 ռուբլին շատ քիչ է և առաջարկեց աւելաց-

նել այդ գումարը։ Ժողովը որոշեց դրա համար 500 ռուբլի և յանձնարարեց Վարչութեանը՝ ըստ հնարաւորութեան արդիւնաւոր դարձնել այդ ճամբորդութիւնը։

Ժողովն անցաւ այնուհետև Ընկ. պաշտօնատար մարմինների գործունէութեանը։ Պ. Յովհ. Թումանեանը, յիշատակելով մի-երկու դէպք, գտնում է, որ Ընկերութիւնը բաւականաչափ հոգատար և ուշադիր վերաբերմունք չի ցոյց տալիս դէպի իր հետ գործ ունեցող գրագէտները։ Պ. Թումանեանը պահանջում է, որ այդպիսի լուրջ Ընկերութիւնը այդ յարաբերութիւնները պահպանի գրագէտների հետ՝ իրան և այդ գրագէտներին միանգամայն վայել լրջութեան և ուշադրութեան սահմաններում։ Վարչութեան և Խմբագրական մասնաժողովի անդամները պատասխանում են, որ իրանք այդ անում և ամեն կերպ ձգտում են նրան։

Ամենից շատ խօսուեց Ընկերութեան հրատարակութիւնների և նրանց ուղղութեան ու բնոյթի մասին. պահանջ է դրւում՝ չսահմանափակուել միայն գեղեցիկ գրականութեան երկերով, տալ նաև ուսումնասիրութիւններ՝ յատկապէս հայերի տնտեսական դրութեան վերաբերեալ։ Վարչութիւնը պատասխանում է, որ հայ, մանաւանդ գաւառական ընթերցողը ընթերցանութեան գիրք է պահանջում, նրան չի կարելի ուսումնասիրութիւններ տալ։ Բացի այդ, Ընկերութիւնը դեռ նոր լինելով, պէտք է ձգտի հաստատուն հիմք ձգել, իսկ դրա համար նա դեռ ևս պէտք է աշխատի շուկայի օրուայ պահանջը գոհացնել, ընթերցողների մի հաստատուն կոնտինգէնտ առաջ բերել։ Չպէտք է մոռանալ, որ Հրատ. Ընկերութիւնը վերջ ի վերջոյ բաժանորդների ընկերութիւն է լինելու, պէտք է հետևողականօրէն ձգտել տարէցտարի բազմացնել բաժանորդների թիւը, մանաւանդ դրա շնորհիւ գիրքը թափանցում է մինչև գաւառական խուլ անկիւնները։ Ընկերութիւնը յետագայում յատուկ ուշադրութիւն է նուիրելու գրքերի տարածման գործին։

Խօսողների մեծ մասը ընդհանուր առմամբ գոհացուցիչ է գտնում Ընկ. Վարչութեան ներկայ գործունէութիւնը։ Ինչ որ ամենից շատ աչքի ընկնող պակասն է Ընկերութեան հրատարակութիւնների մէջ, դա ինքնուրոյն և մանաւանդ նոր գրողների գործերի պակասն է։ Անցեալ տարուայ «Հանրային Մատենադարանի» 12 գրքերից միայն 2-ն է ինքնուրոյն, մնացեալը՝ թարգմանական։ Գտնում են, որ շատ լաւ է, հարկաւ, օտար կլասիկ երկերի թարգմանութիւնը տալ, բայց դրանից աւելի կարևոր տեղ պիտի բռնի մայրենի գրականութեան բարգաւաճմանը նպաստելը՝ լոյս ընծայելով աւելի շատ ինքնուրոյն երկեր։ Դրա հետ միասին պէտք է աւելացնել հոնորարը, հասցնել գոնէ այնպիսի մի չափի, որ փոքր ինչ գրաւչութիւն ներկայացնի հեղինակների համար։

Ուշադրութեան է առնւում նաև այն հանգամանքը, որ մեր պարբերական մամուլի մէջ կան ցրուած հրատարակութեան արժանի ինքնուրոյն և թարգմանական գրուածներ, որոնք կորած են ընթերցողների համար. պէտք է դրանց էլ գտնել և լոյս ընծայել։



Սրանց հետ միասին, Ընկերութիւնն աչքաթող չպէտք է անի գրականութեան մի այլ ճիւղը—քննադատութիւնը՝ լինի դա ինքնուրոյն, թէ թարգմանական։

Վարչութիւնը յայտնում է այնուհետև, որ այս առաջիկայ տարուայ համար ի նկատի ունի հրատարակելու Ստ. Նազարեանի (նրա ծննդեան 100-ամեակի առիթով) ինքնուրոյն աշխարհաբար երկերը և Ս. Շահազիզի գեղարուեստական գրուածքները—«Լևոնի վիշտը» և ոտանաւորները։ Սա լինելու է սկիզբը այն գործի, որով Ընկերութիւնը տարէցտարի աստիճանաբար կը հրատարակէ և հասարակութեան սեփականութիւն կը դարձնէ հին գրողների երկերը։ Ժողովը հաւանութիւն տալով այդ ծրագրին, միաժամանակ ցաւ է յայտնում, որ «Հանրային Մատենադարանը» տարեկան 24 գրքի փոխարէն, որոշուած է տալ 12 գիրք։ Միաբերան ցանկութիւն է յայտնւում, որ Ընկերութիւնը, որպէս կենդանի, շարժուն մի գործ, գայ ամենից առաջ խթանելու ներկայի ապրող գրականութիւնը, որպէսզի նա ուժեղանայ։ Ի վերջոյ ժողովը հաւանութիւն է տալիս ծախսի հետևեալ գումարներին. 1 Մանկական գրքերի հրատարակութեան (նուիրած)—3,000 ռ., 2. «Հանրային Մատենադարանին՝ յատկապէս գեղեցիկ գրականութեան համար—2,500 ռ., 3. Ստ. Նազարեանի և Ս. Շահազիզի երկերի հրատարակութեան—1,200 ռ., 4. Ժողովրդական գրքոյկների հրատարակութեան—1,000 ռ.։

Ժամանակի ուշ լինելու պատճառով նախահաշուի միւս կէտերի, նոյնպէս և մնացած հարցերի քննութիւնը թողնուեց ժողովի շարունակութեանը—առաջիկայ շաբաթ։

Նախագահ՝ Տ. Յովհաննիսեանց

Քարտուղար՝ Ա. Գուլօեանց

## II

1913 թ. փետրուարի 17-ին կայացաւ Կովկ. Հայոց Հրատարակչ. Ընկ. արտակարգ ընդհանուր ժողովի շարունակութիւնը, նախագահութեամբ Տիգրան Յովհաննիսեանի և քարտուղարութեամբ Յովհ. Տէր-Մարկոսեանի։

Ժողովին ներկայ էին 25 անդամ։

Շարունակւում է 1913 թ. նախահաշուի քննութիւնը։ Քարտուղարութեան համար նշանակուած 240 ր. գումարի շուրջը երկար խօսակցութիւն տեղի ունեցաւ. շատերի կարծիքով քարտուղարութիւնը պէտք է կատարեն ընտրուած անդամները ձրի. հակառակ կարծիքներ յայտնողներ եղան, որ պէտք է վարձատրել։ Գրասենեակապետի 780 րուբլի ռոճիկը նոյնպէս երկար խօսակցութեան նիւթ դարձաւ. շատերը գտան քիչ և առաջարկեցին աւելացնել. առաջարկ եղաւ նաև երկու պաշտօնը յանձնել մի մարդու. ժողովը այդ հնարաւոր չգտաւ։

Որոշուեց հաստատել ռոճիկների համար որոշուած 1020 րուբլին և թողնել Վարչութեանը, որ նա ըստ յարմարութեան գործադրի, նախորոշելով, որ պաշտօնական քարտուղարները չվարձատրուեն, ինչպէս ասուած է կանոնադրութեան մէջ։

Առաջարկ եղաւ, որ արձանագրութիւնները մանրամասն կազմելու կարիք չկայ և այն ընդունուեց մեծամասնութեամբ։

Թարգմանութիւնների համար նշանակուած 200 ր. մրցանակաբաշխութեան առիթով հարց եղաւ, թէ ինչու թարգմ. համար է նշանակւած, այլ ոչ ինքնուրոյն աշխ. համար։

Վարչ. անդամ բժ. Մինասեանցը պատճառաբանում է, որ Ընկ. մէջ ստացուած բոլոր թարգմանութիւնները համարեա թէ անկատար են լինում, ուստի Վարչ. այս միջոցին դիմեց թարգմանիչներին խրախուսելու և կատարեալ թարգմանութիւններ ստանալու համար։ Իսկ ինքնուրոյն աշխատութիւնների համար Ընկ. առանց այն էլ առատ է վարձատրում։

Ժողովը ընդունում է թարգմ. համար նշանակուած գումարը և որոշում է 500 ր. էլ յատկացնել ինքնուրոյն աշխ. համար։

Առաջարկ եղաւ առանձին մրցանակաբաշխութեան ժիւրի ընտրել, բայց մեծամասնութեամբ մերժուեց և յանձնարարուեց Վարչութեանը, որ վարուի կանոնադրութեան համաձայն։



Առաջարկ եղաւ, որ թարգմանական հոնորարի սակագինը աւելացնուի։

Ժողովը ցանկալի համարեց այդ մասին յայտնել սակագները որոշող խառն ժողովին։

Բնակարանի վարձը 324 ր. դարձրուեց 360, որ աւելի յարմարաւոր բնակարան վարձուի։

Քանի որ նախահաշուի մուտքից՝ ծախքերի աւելանալու պատճառով կըպակասի մօտ 750 րուբլի, ուստի այդպիսի գումարը լրացնելու համար, որոշուեց ճանապարհորդութեան համար յատկացրուած գումարի դիմաց մուտք նշանակել 750 րուբլի։

Ժողովը անցաւ մանկական գրքերի հրատարակութեան համար յատուկ խմբ. Մասնաժողով ընտրելու խնդրին։

Առաջարկներ են լինում, որ յատուկ մասնաժողով չընտրուի, այլ ընդհանուր խմբ. մասնաժ. կազմը ուժեղացուի և մանկ. գրքերի վերաբ. աշխատանքը ևս յանձնուի նրան։

Ոմանց ասելով կանոնադրութ. թոյլ չի տալիս մի առանձին ինքնուրոյն խմբ. մասնաժ. ունենալ։

Կարդացւում է կանոնադրութեան 35 յօդուածը, որը և լուսաբանւում է այսպէս, որ թոյլ է տրւում մանկական գրքերի համար յատուկ խմբագրական Մասնաժ. ունենալ, անկախ ընդհ. խմբ. մասնաժողովից։

Հարցը քուէարկութեան է դրւում և մեծամասնութեամբ ընդունւում է ընտրել 7 հոգուց կազմուած մի մասնաժողով։

Առաջարկ է լինում՝ արդեօք այն մանկական գրողները, որոնք կմըտնեն մասնաժ. մէջ, իրաւունք ունե՞ն իրենց աշխատութիւնները ներկայացնելու այդ մասնաժ. քննութեանը։

Ժողովը սկզբունքով դէմ չէ, բայց ներկայ դէպքում ցանկալի է համարում, որ չներկայացուեն։

Ժամանակի ուշ լինելու պատճառով ընտրութիւնը յետաձգւում է միւս ժողովին։

Յետաձգւում են նաև օրակարգի միւս հարցերը։ Ժողովը որոշում է իր կողմից մի շնորհակալական հեռագիր ուղարկել Պետերբուրգ՝ Պ. Օ. Ղուկասեանին՝ նրա մանկական գրքերի համար յատկացրած 3000 րուբլու գումարի առթիւ։

Նախագահ՝ Տ. Յովհաննիսեանց

Քարտուղար՝ Յ. Տէր-Մարկոսեանց

## III

1913 թուի մայիսի 5-ին, երեկոյեան, Կ. Հ. Բարեգործական Ընկերութեան դահլիճում տեղի ունեցաւ Հայոց Հրատարակչական Ընկերութեան տարեկան ընդհանուր ժողովը. ներկայ էին 29 անդամներ։

Ընդհանուր ժողովի նախագահ ընտրուեց պ. Տ. Յովհաննիսեանը, իսկ քարտուղար՝ Խորէն քահ. Խուցեանը։

Ժողովի հարցերն էին.—

1. Վարչութեան և Խմբագրական Մասնաժողովի զեկուցումները 1912 թուի գործունէութեան մասին.
2. Վերաստուգիչ յանձնաժողովի զեկուցումը.
3. 1912 թուի հաշուի քննութիւնն ու հաստատումը.
4. Խմբագրական Մասնաժողովի նախագահ Գիւտ. ա. ք. Աղանեանցի զեկուցումը Հիւսիսային Կովկաս և Ռուսաստան կատարած ճանապարհորդութեան մասին.
5. Ընկերութեան Բագուի ճիւղի 1910—1912 թուերի հաշիւը և Արդուինի ճիւղի 1912 թ. հաշուի և 1913 թուի նախահաշուի քննութիւնն ու հաստատումը։
6. Վարչութեան զեկուցումը Վլադիկաւկազում և Կաղզւանում Ընկերութեան ճիւղեր բաց անելու մասին.
7. Վարչութեան 3 անդամի և 5 փոխ-անդամի, Խմբ. մաս-ի 3 անդամի և 2 փոխ-անդամի ընտրութիւնները.
8. Մանկական գրքերի համար յատուկ Խմբ. մաս.-ի ընտրութիւնը. և
9. Հերթական խնդիրներ։

Պ. Նախագահի առաջարկութեամբ ընդհանուր ժողովը յոտնկայս յարգեց մեր հռչակաւոր գրողներ Րաֆֆու և Ծերենցի յիշատակը՝ սրանց մահուան 25-ամեակի առթիւ։

Կարդացուեցին փետրուարի 10-ի և նրա շարունակութիւն փետրուարի 17-ի արտակարգ ժողովի արձանագրութիւններն ու հաստատուեցին։

Ժողովի ցանկութեամբ պ. նախագահը կարդում է Վերաստուգիչ յանձնաժողովի արձանագրութիւնը (Տեղեկագիր երես 18)։ Իբրև թերութիւն նըկատում է, որ այս Տեղեկագրի մէջ չէ տպուած Խմբագրական մասնաժողովի բացատրութիւնը՝ Վերաստուգող յանձնաժողովի նկատած կէտերի մասին։



Առարկւում է, որ միայն 4 օր առաջ Վարչութիւնը որոշել էր տպել այս Տեղեկագիրը, Խմբագրական Մասնաժողովը հնարաւորութիւն չունեցաւ նիստ ունենալու և կազմելու իր բացատրութիւնը։ Վերաստուգիչ յանձնաժողովի նկատողութիւնների առթիւ Վարչութեան նախագահ պ. Զարգարեանցը տալիս է բացատրութիւն. 1) Նախահաշւով սպասելիք 14,102 ր. 30 կոպէկի տեղ ստացուել է 13,760 ր. 29 կոպէկ, պակաս 342 ր. 01 կոպէկ, որովհետև նախ այն ներկայացումը, որ Վարչութիւնը մտադիր էր դընել՝ չաջողուեց, բացի դրանից Վարչութիւնը դիմել էր Պետական Դումայի անդամ Միլիւկովին Աջեմեանցի միջոցով, որ Թիֆլիսում դասախօսութիւն կարդայ. թէև սկզբում տուեց իր համաձայնութիւնը, բայց յետոյ այդ դասախօսութիւնը տեղի չունեցաւ. 2) Նախահաշւով 14,102 ր. 30 կոպէկ ելքի փոխարէն Վարչութիւնը ծախսել է 11,200 րուբլի, պակաս մօտ 2,900 ր., որովհետև նիւթեր չեն եղել տպագրութեան տալու. 3) Նախահաշուից դուրս կատարուած ծախսերի առթիւ, Վարչութեան պ. նախագահը բացատրում է՝ թէ քանի որ ընդհանուր ժողովը յանձնարարել էր Վարչութեանը՝ գաւառները մարդիկ ուղարկել Ընկերութեան ճիւղեր հիմնելու և առհասարակ աշխատելու Վարչութեան օգտին, ահա այդ նպատակի համար Վարչութեան որոշմամբ հայր Գիւտը ուղարկուեց հիւսիսային Կովկաս և Ներքին Ռուսաստան. այդ ճանապարհորդութեան համար ծախսուեց 627 ր., որի դիմաց Տէրհօր ջանքերով Ընկերութիւնը շահւում է մօտ 4612 րուբլի, իսկ պ. Գր. Վարդանեանի դերը միայն այն չէր, որ դրամ բերէր, այլ տարածէր Ընկերութեան գաղափարը, գտնէր աշխատող անդամներ, հիմնէր ճիւղեր և տարածէր Ընկերութեան հրատարակութիւնները. իր վրայ դրած պարտականութիւնը որոշ չափով կատարել է պ. Գր. Վարդանեանցը. 4) Մանկական գրադարանի օգտին Մնացական Խունունցի նուիրած 300 րուբլուց գործադրուել է միայն 180 րուբլի, որովհետև յարմար գիրք չէ եղել տպագրելու. 5) Տառերի գիւտի 1500 ամեակի համար կազմած յանձնաժողովին փոխարինաբար տուած է 250 րուբլի առանց ընդհանուր ժողովի, որովհետև ամառն էր, անհնար էր ընդհ. ժողով հրաւիրել. Թիֆլիսում եղած Վարչութեան անդամները որոշեցին այդ՝ պատասխանատուութիւնը իրենց վրայ վերցնելով. այժմ ընդհանուր ժողովը պէտք է ցոյց տայ իր վերաբերմունքը այդ 250 ր. ծախսի նկատմամբ։

Թեր ու դէմ խօսակցութիւն տեղի ունեցաւ Վերաստուգիչ յանձնաժողովի արձանագրութեան չորրորդ կէտի վերաբերմամբ, ուր ասուած է, թէ Խմբ. մասնաժողովի կողմից նկատւում է մի ընդհանուր մշակած ղեկավարող ծրագրի բացակայութիւն. մինչև անգամ դէպք է եղել, որ պատուէր տուած և տպագրուած նիւթը հանուել է շուկայից, օր. Մարտ. Յարութիւնեանի թարգմանութիւն՝ Իբսէնի «Ուրուականներ»-ը։ Ժողովին ներկայ եղող Վերաստուգիչ յանձնաժողովի անդամ պ. Թերզիբաշեանը լրացնում է ասելով, թէ նախկին Խմբ. մասնաժողովը իր գործունէութեան սկզբին կարիք է զգացել և մշակել է մի ծրագիր, որով ղեկավարուել է։ Առանց քննութեան մէջ մտնելու, թէ լաւ է եղել այդ ծրագիրը թէ վատ, բայց ե-

ղել է մի ղեկավար ծրագիր. մինչդեռ ներկայ Խմբ. մասնաժողովը զանց է արել այդ եղած ծրագիրը և ինքը սկսել է ընթանալ ուրիշ ուղիով. ահա դրա համար Վերստուգիչ յանձնաժողովը նկատում է, որ բացակայում է ղեկավարող ծրագիր Խմբ. մասնաժողովի գործունէութեան մէջ. դրանով է բացատրւում այն տխուր փաստը, որ Խմբ. մասնաժողովից հաւանութիւն գտած և Վարչութեան կարգադրութեամբ տպուած «Ուրուականները»՝ նոյն Վարչութեան և Խմբ. մասնաժողովի Խառն ժողովը անհրաժեշտ է համարել հրապարակից հանել: Ժողովականներից ոմանք էլ լրացնում են, որ Խմբ. մասնաժողովի մէջ առաջարկուած նիւթերը չեն քննուել կանոնաւոր կերպով: Անդամներից մէկին կամ երկուսին յանձնելով նիւթը քննելու, դեռ նրանց գրաւոր զեկուցումը չլսուած՝ բաւականացել է բերանացի զեկուցմամբ և մինչև անգամ քննողի բացակայութեան ժամանակ ընդունուել է նիւթը:

Խմբ. մասնաժողովի կողմից բացատրութիւն է տալիս Գիւտ ա. ք. Աղանեանցը, թէ ներկայ Խմբ. մասնաժողովն ունեցել է որոշ ծրագիր, որով ղեկավարուել է իր գործունէութեան ընթացքում: Հրապարակի վրայ է «Հանրային Մատենադարանը», որի մէջ մտել են գեղեցիկ և կլասիկ գրուածքներ. դա արդէն որոշ ծրագիր է. հիմք ենք ունեցել թէ Ընդհանուր ժողովների և թէ Վարչութեան որոշումները, որ հրատարակուին բելետրիստիքական երկեր. կունենանք շուտով մի ուրիշ սերիա, որի մէջ կմտնեն մեր կլասիկ հեղինակների թէ անտիպ և թէ սպառուած երկերը. ահա մեր ծրագիրը:

Իբսէնի «Ուրուականներ»-ի թարգմանութեան, տպագրութեան և շուկայից հանելու դէպքը բաւական երկար վիճաբանութիւնների պատճառ եղաւ:

Այդ հարցի մասին զեկուցում է տալիս Վարչութեան անդամ պ. Ս. Լիսիցեանը, որից երևաց, որ Վարչութիւնն ու Խմբ. մասնաժողովը յանձնարարել էին պ. Մ. Յարութիւնեանին թարգմանել վերոյիշեալ գիրքը. երբ ստացուեց թարգմանութիւնը, յանձնուեց Խմբ. մասնաժողովի անդամներից մէկին զեկուցում տալու այդ թարգմանութեան մասին: Այդ պարոնը քաղաքից մեկնելու պատճառով՝ Մասնաժողովի միւս անդամին յանձնարարում է յայտնել, որ թարգմանութիւնը ունի սխալներ, առանց սրբագրելու չէ կարելի տպել: Մասնաժողովի նիստին այդ կարծիքը յայտնւում է աղաւաղուած ձևով, թէ թարգմանութեան մէջ նկատւում են սխալներ, բայց կարելի է տպել: Խմբ. մասնաժողովը բաւականանում է այդպիսի թերի, բանաւոր և մէկի զեկուցումով և առաջարկում է Վարչութեանը տպագրել և տպւում է այդ «Ուրուականներ»-ը: Տպուելուց յետոյ նախ քան շուկայ հանելը, ինչպէս սովորութիւն կայ, տպուած գիրքը բերւում է Վարչութեան ժողովին: Անդամները թերթելով՝ նկատում են, որ ունի բազմաթիւ սխալներ ոչ միայն լեզուական, այլ կարելի է ասել, որ հայերէն չէ. գերմաներէնից բառացի թարգմանութիւն լինելով՝ ընթերցողը բան չէ հասկանալու: Խառն ժողովը քննելով այդ հարցը, և ծանօթանալով թարգմանութեան



բազմաթիւ սխալների հետ, որոշեց՝ աւելի լաւ է կորցնել այդ տպագրութեան համար եղած 180 ռուբլի ծախսը, քան թէ դրա վրայ աւելացնել հոնորարը, որ պէտք է տրուի թարգմանչին, եթէ վաճառքի հանենք և որ գլխաւորն է՝ դրանով Ընկերութիւնը հրապարակ է հանում մի թարգմանութիւն, որ պատիւ չի բերի նրան. դրանով կվնասուի թէ լեզուն և թէ բուն հրատարակութեան գործն ու նպատակը, և որ Ընկ.-ը պարտաւոր է տալ հասարակութեանը ընտիր, կանոնաւոր, մշակուած և զուտ մայրենի լեզուով երկեր: Որպէսզի Ընկերութիւնը ազատուի բարոյական և նիւթական այդ վնասից, Վարչութիւնը բարւոք համարեց չտպուած համարել այդ գիրքը և ունենալ այդ 180 ր. կորուստը:

Հաղորդուել է թարգմանչին. նա բացէիբաց մերժել է իր աշխատութեան թերութիւնը: Համաձայն չէ, որ սրբագրուի կամ նորից տպուելու դէպքում՝ տրուի նրա և երկրորդ սրբագրողի անունը:

Ժողովականներից մի քանիսը առաջարկում էին, որ այդ թարգմանութիւնը, թէև ունի սխալներ, լեզուական թերութիւններ, բայց քանի որ ժողովում, մամուլի մէջ հրապարակով այսպէս քննում է թարգմանչի գործը՝ թող հրատարակուի և պարզուի թէ թարգմանութեան վատ կողմերը և կամ թէ Վարչութեան սխալը:

Պ. Նախագահը ամփոփելով վիճաբանութիւնը՝ քուէարկում է 2 առաջարկութիւնները: 1. Հաստատել Վարչութեան որոշումը (կորցնել այդ 180 ր. ծախսը և հրապարակ չհանել այդ տպագրութիւնը) և 2. Շուկայ հանել այդ թերութիւններով: Այս 2 առաջարկութիւններից անցնում է առաջինը: Վերստուգիչ յանձնաժողովի անդամ պ. Խարազեանցը հարց է տալիս Վարչութեանը, թէ որո՞նք են այն պատճառները, որոնց շնորհիւ չեն տպուել ինքնուրոյն գրուածքներ 1) Ահարոնեանի «Շվէյցարական գիւղը» և 2) Ա.-Դօի «Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայէթները», որոնք ընդունուել են Խմբ. Մասնաժողովի կողմից: Վարչութեան Նախագահ պ. Զարգարեանը այդ առթիւ բացատրութիւն է տալիս, թէ Ահարոնեանը գրուածքը ընդունուել էր, բայց հոնորարի նկատմամբ հեղինակը չհամաձայնուեց և յետ ստացաւ. իսկ Ա.-Դօի գրքի նկատմամբ Խմբ. մասնաժողովի ցուցմունքի համաձայն՝ հեղինակին հաղորդուեց, որ մի քանի ուղղումներ է հարկաւոր. Ա.-Դօն յետ ստացաւ և իր հաշուով տպեց:

Ընդհանուր ժողովի քննութեան առարկայ դարձաւ Վարչութեան և Խմբ. Մասնաժողովի փոխ-յարաբերութեան հարցը: Թէ այդ «Ուրուականներ»-ի և թէ առհասարակ ուրիշ նիւթերի առթիւ Վարչութեան և Խմբագր. Մաս-ի մէջ ամբողջ տարի եղել է սկզբունքային վէճ, որը այնքան էլ մխիթարական չէ և որից տուժել է գործը: Այդ վէճը կայանում է նրանում, որ Խմբագր. Մաս.-ը կանգնել է այն տեսակէտի վրայ, թէ ինքն է այս կամ նիւթ ընդունողը, ընտրողը, տպագրելու որոշում տուողը, իսկ Վարչութիւնը իրագործող է այդ որոշումների: Իսկ Վարչութիւնը միշտ առաջ է բերել առարկութիւն՝ թէ, նա չէ կարող գործիք լինել Խմբ. Մաս.-ի ձեռքին, Ընկերութեան իրաւասու և պատասխանատու մարմինը Վարչութիւնն

է. նա պէտք է իրազեկ լինի ամեն բանի. նա ամեն նիւթի առթիւ պէտք է իր կարծիքը ունենայ և մինչև անգամ եթէ տեսնում է, որ Խմբ. Մաս.-ը ընտրել է մի անյարմար նիւթ, նա կարող է տպագրութեան չտալ։ Այս հարցի առթիւ եղաւ կարծիքների փոխանակութիւն։ Պ. Վարդազարեանի կարծիքով Խմբ. մասնաժողովին շատ աշխատանք է տրւում, իսկ Վարչութեան անդամներին պակաս. Խմբ. Մաս.-ի 2 անդամների զեկուցումները բաւական չեն նիւթն ընդունելու կամ մերժելու։ Այդ 2 զեկուցանողների անհատական վերաբերմունքից կախուած է լինում այս կամ այն վճիռը. պէտք է ստեղծել մի մարմին Վարչութեան և Խմբ. մասնաժողովի փոխարէն. թէ ինքնուրոյն և թէ թարգմանական առաջարկուած նիւթերը պէտք է քննուեն հենց նիստի ժամանակ, բոլորի ներկայութեամբ. կարդացուեն այս կամ այն կտորները. թարգմանութիւնը համեմատուի բնագրի հետ... և վճիռը լինի մեծամասնութեան կողմից։ Պարոն ճառախօսը այս սիստեմը համարում է գերադասելի։

Քանի որ Ընդհանուր Ժողովի իրաւասութիւնից բարձր է Վարչութեան և Խմբագրական մասնաժողովի պարապմունքների ձև մշակելը՝ Ընդհանուր Ժողովը ցանկութիւն յայտնեց, որ Վարչութիւնը մի մշակուած զեկուցում բերէ արտակարգ Ընդհանուր Ժողովին, այս 2 մարմինների փոխ-յարաբերութեան, 2 մարմինների փոխարէն մէկ մարմին ունենալու առաւելութեան կամ թերութեան մասին և թէ կանոնադրութեան այս կամ այն կէտի լուսաբանութեան կամ փոփոխութեան վերաբերեալ։

Ուշ լինելու պատճառով միւս հարցերի քննութիւնը յետաձգուեց։

Նախագահ Տ. Յովհաննիսեան

Քարտուղար՝ Խորէն Քահ. Խուցեան

Իբսէնի «Ուրուականների» վերաբերմամբ նախագահ Տ. Յովհաննիսեանն իր կողմից առաջարկեց մի երրորդ բանաձև, որ չանցաւ, այն է՝ թարգմանութեան բոլոր տպուած օրինակները յանձնել թարգմանչին, իրաւունք տալով նրան ի վաճառ հանել իբրև իր հրատարակութիւնը։

Նախագահ Տ. Յովհաննիսեան

## IV

Մայիսի 12-ին Կ. Հ. Բարեգործական Ընկերութեան դահլիճում տեղի ունեցաւ ամսոյս 5-ի Ընդհանուր Ժողովի շարունակութիւնը՝ նախագահութեամբ պ. Տ. Յովհաննիսեանի, մասնակցութեամբ 29 անդամի։ Կարդացուեց նախկին Ընդհանուր Ժողովի արձանագրութիւնը և վաւերացուեց մի քանի լրացումներով։ Ժողովն անցնում է Վարչութեան գործունէութեան քննութեանը։

Յովհ. Թումանեան. Տեսանք, թէ ինչ վիրաւորական ձևով է վերջացել Մարտ. Յարութիւնեանի թարգմանութեան գործը, մերժել Սուրխաթեանի քննադատական գրուածքը. ընդունել և մէկել ետ են դարձրել Ջիթունու և Ա-Դօի արժէքաւոր աշխատութիւնները. իմ ներկայացրած «Հայ Գրողներն» էլ տարօրինակ վարմունքի հանդիպեց. ես կարծում եմ Վարչութեան կողմից այսպիսի վերաբերմունք չպէտք է լինի. պատուէր տալուց յետոյ չպէտք է սկսուին անախորժ պատմութիւնները։ Ստեղծուել է մի շատ տարօրինակ և ցաւալի դրութիւն. գրողը կամ թարգմանիչը այստեղ չէ զգում իր տանը. մարդիկ նստում աշխատում են, որ բան շահուին, բայց հիմա պէտք է մտածեն, թէ գուցէ չընդունուի իրենց աշխատութիւնը։ Այսպիսի յարաբերութիւնը վարչութեան և գրողի մէջ վատ է. աշխատողները կփախչեն, էլ չեն մօտենայ, մտածելով, թէ գուցէ բան չստանամ և վիրաւորեն էլ։ Ընկերութեան շահից զատ և նրանց, գրական մարդկանց շահն էլ պէտք է ինկատի ունենալ։ Գիտեմ, որ, օրինակ, Ա-Դօի աշխատութիւնը իր յառաջաբանով մի արժէքաւոր և լուրջ աշխատութիւն է, ինչու պէտք է ետ դարձնէր Վարչութիւնը, ինչու չպէտքէ աշխատէր, որ հրատարակէր էդպէս օգտակար մի գիրք։

Լէօ. Այդ Մ. Յարութիւնեանի դէպքը ինձ վրայ էլ ճնշիչ տպաւորութիւն թողեց. թարգմանիչը անծանօթ մարդ չէ. յամենայն դէպս Վարչութիւնը այդ ձևով չպէտքէ հրապարակ հանէր. այս տեսակ դէպք միւս գրողներին էլ կստուեցնի. պէտքէ համբերաշխ գործելու եղանակը ստեղծել։ Ա-Դօի դէպքն էլ ծանօթ է ինձ, թէկուզ 10-եակ պակասութիւններ էլ ունենար, իմ կարծիքով պէտք է տպէր Վարչութիւնը. ծանօթ եմ գրուածքին. ինքս խորհուրդ տուի հեղինակին, որ դիմի Հրատարակչական Ընկերութեանը. ահա այսպիսի վարկաբեկիչ դէպքեր չպէտք է լինին։

**Երզնկեան.** *Մ. Ցարութիւնեանի հարցը թէև անցեալ ժողովում որոշուեց, բայց այժմ պէտք է վերաքննել, քանի որ անցեալ անգամ Վարչութեան և Խմբ. մասնաժողովի անդամները ժողովի մեծամասնութիւնն էին կազմում։*

**Գ. ա. Բահ. Աղանեանցը** *ուղղում է մտցնում, որ անցեալ անգամ 29 հոգի ներկայ եղողներից 14 հոգի Վարչ. և Խմբ. Մասնաժողովի անդամներն են եղել, իսկ մնացածը կողմնակի մարդիկ (ընկ. անդամներ)։*

**Ղազարեան.** *Իբրև Խմբագրական Մասնաժողովի անդամ ինքս էլ բողոքում էի Վարչութեան վերաբերմունքի համար Մարտ. Ցարութիւնեանի նկատմամբ. չէ կարելի գործը քննել, առանց հրապարակ հանելու։ Ինքս էլ կողմնակից եմ, որ վերաքննուի այդ հարցը։*

**Ս. Խառազեան.** *Կանոնադրութեան հիման վրայ իրաւունք ունենք վերաքննելու. ընդհանուր ժողովը կարող է վերադարձնել Խմբ. Մասնաժողովին, որ նա նորից քննէ հարցը. ահա այդ հիման վրայ կարող ենք վերաքննել։*

**Նախագահ.** *Դժուարանում եմ նորից քննութեան դնել Մարտ. Ցարութիւնեանի հարցը, որովհետև դա ես գտնում եմ անկանոն—ամեն անգամ կարելի է այդպէս վարուել. իմ կարծիքով այդ հարցի նկատմամբ հարցը վճռուած է անվերադառնալի. հարցը լոկ Մ. Ցարութիւնեանին չէ վերաբերում, այստեղ Վարչութեան և Խմբագրական Մասնաժողովի գործունէութեան մասին է խօսքը, որ նկատուում են թերութիւններ. սա ծանրակշիռ հարց է. եթէ թիւրիմացութիւն չէ՝ շատ ցաւալի է. ահա պէտքէ աշխատել վերացնել այդ թերութիւնները։ Հարկաւոր է, որ Վարչութիւնը տայ իր բացատրութիւնը, ժողովականներս էլ լսելով այդ՝ կտանք հնարաւոր ցուցմունքներ, որ գրողների և թարգմանիչների հետ Վարչութիւնը ունենայ ցանկալի յարաբերութիւն, թէ չէ, շատ ցաւալի կլինի, եթէ իրօք Հրատարակչական Ընկերութիւնից խոյս տան մեր գրողներն ու թարգմանիչները։*

**Լեօ.** *Նոյն իսկ, եթէ բացատրութիւններ էլ տան Վարչութեան անդամները, դա ինձ չի գոհացնի. ինչ հարկաւորութիւն կար, որ Վարչութիւնը այդպէս վարկաբեկում է, օրինակ, Մ. Ցարութիւնեանին. մինչև անգամ ընդունուած կարգ է, որ չընդունուած նիւթը և հեղինակի անունը չի տրուում ոչ ցուցակում, ոչ տեղեկագրում, հրապարակ չէ հանուում և չի էլ քննուում։*

**Աբանասեան.** *Երբ մի գրող կամ մի թարգմանիչ, թէկուզ յայտնի գրող, մի աշխատութիւն է ներկայացնում, ի հարկէ նա պէտք է մտածի, որ կարող է մերժուիլ. ամենքն էլ պէտքէ գիտենան, որ ամեն մի անպէտք գործ չպէտքէ ներկայացնել. ընդհակառակը, ես անկորրեկտ եմ գտնում այն հեղինակի վարմունքը, որ մի քանի անգամ բարեխիղճ կերպով վերաբերուելով կանոնաւոր մշակած նիւթ է ներկայացրել և ընդունուել Վարչութեան կողմից, և յետոյ, մի ուրիշ անգամ, ներկայացնում է այնպիսի անմշակ և վատ թարգմանութիւն կամ ինքնուրոյն գրուածք, որի հրապարակ հանելը պատիւ չի բերի ոչ Ընկերութեան և ոչ էլ իրեն, հեղինակին, այնպէս որ ամենքի գրուածքն էլ կարելի մերժել, եթէ նա ունի որոշ թերութիւններ։*

**Թումանեան.** *Մասնաւոր դէպքի կամ անձի վրայ չեմ ուզում ծանրանալ. երբ Վարչութիւնը մէկին դիմում է մի որևէ երկ թարգմանելու, դա նշանակում է, որ Վարչութիւնը համոզուած է, որ էդ մարդը ձեռնհաս մէկն է. իսկ եթէ չի իմանում և դիմում է, էլի վատ է անում։ Ինչպէս են խօսում, կարծես թէ էդ մարդը զոռով վատ է գրել, որ իրեն խայտառակի։ Վարչութեան գործելակերպի նկատմամբ ստեղծուել է մի դժգոհութիւն. էս բանը անցեալ Ընդ. ժողովի ժամանակ էլ արտայայտուեց. Վարչութիւնը լռում է. Ընդ. ժողովը այժմ պէտք է ցոյց տայ իր վերաբերմունքը։*



**Զարզարեան (Վարչ. Նախ.).** *պ. Թումանեանը շատ խիստ յարձակումներ է անում Վարչութեան վրայ և քննում նրա գործունէութիւնը. Ա-Դոյի և Ջիթունու գրքերի մասին խօսելով՝ մեղադրում են մեզ, թէ մենք անպատուել, վիրաւորել ենք հեղինակներին. այդ աշխատութիւնները առաջ ընդունուած էին. դրանց տպագրութեան համար պահանջւում էր մօտ 2000 րուբլի. հեղինակներին յայտնուեց, որ մեր միջոցները չեն ներում. երբ մեզ յաջողուի միջոցներ գտնել՝ կըտպագրենք։ Վարչութեան այս վարմունքի մէջ վիրաւորական բան չկայ. հաստատուած նախահաշուով մենք կարող էինք գործել, իսկ այդ նախահաշիւը մեզ թոյլ չէր տալիս այդպիսի ծախսեր անել։ Ցատկապէս Ա-Դոյի գրքի մասին կասեմ, որ Խմբագրական Մասնաժողովը մատնացոյց էր արել նրա մի քանի թերութիւնների վրայ, Վարչութիւնը դիմեց հեղինակին, խնդրեց ուղղել և առաջին հնարաւոր դէպքում Վարչութիւնը կըտպի։ Ա-Դոն նեղացած՝ ետ վերցրեց իր աշխատութիւնը. Վարչութեան արածի մէջ վիրաւորական բան չեմ գտնում։ Այդպէս էլ «Հայ Գրողները» համարուեց անհրաժեշտ տպելու, բայց մեծ ծախս էր պահանջւում. Խմբ. Մասնաժողովը ընդունելով նիւթը՝ դիմեց Վարչութեանս, որ նրա համար աշխատի առանձին միջոց գտնել. այդպէս յայտնուեց հեղինակին։ Եթէ Վարչութեան տրամադրութեան տակ նախահաշուով գումարներ են եղել և մենք մերժել ենք այս նիւթերը, այն ժամանակ դատապարտեցէք մեզ։*

**Երզնկեան.** *Նոյն իսկ յայտնի գրողի գրուածքը կարելի է ետ դարձնել, եթէ անյարմար է, կամ ունի թերութիւններ, բայց նախ քան տպելը։*

**Մարգար.** *Այս ժողովը անցեալ ժողովի կրկնութիւնն եմ համարում, բացի պ. Թումանեանի ասածներից։*

**Նախագահ.** *Այժմ Վարչութեան գործունէութիւնն է քննուում. անցեալ անգամ, օր., Ա-Դոյի գրքի մասին խօսուեց թռուցիկ կերպով. այսօր պէտք է պարզել Վարչութեան ամբողջ գործունէութիւնը. ցոյց տանք մեր վերաբերմունքը և ձև առաջարկենք ապագայի համար, որ եթէ մինչև այժմ եղել են թիւրիմացութիւններ Վարչութեան և Խմբ. մասնաժողովի մէջ, կամ հեղինակների և Վարչութեան մէջ՝ այսուհետև չլինեն։*

**Ղազարեան.** *պ. պ. Թումանեանի, Լէօյի և Զարզարեանցի ասածները վերաբերում են մասնաւոր հարցերին. ցաւալի երևոյթներին ընդ միշտ վերջ տալու համար պէտք է դնել 2 մարմինների յարաբերութեան հարցը. պէտք է մի մարմին լինի՝ թէ՞ անջատ-անջատ։ Այժմ 2 մարմինների յարաբերութիւնները նորմալ չեն. դրանից են ծագել այդ թիւրիմացութիւնները։*

Խմբագրական Մասնաժողովը քննում—ընդունում է նիւթը, յանձնում Վարչութեանը, սա ընդունում կամ դարձնում է հեղինակին և ահա ծագում են թիւրիմացութիւններ։ Վարչութիւնը գտնում է իրեն համար վիրաւորական, որ գործը կատարուի առանց իրեն մասնակցութեան, դառնայ գործիք, Խմբ. Մասնաժողովը հրամայէ և նա էլ կատարի. նիւթի ընտրութեան գործում Վարչութիւնը մասնակցութիւն չունի։ Ճիշտ չեն որոշուած իրաւասութեան սահմանները. կանոնադրութեամբ որոշուած են, բայց և այնպէս թիւրիմացութիւններ են լինում, որովհետև Վարչութեան մէջ եղածները սխալ են բացատրում կանոնադրութեան այս կամ այն կէտը։ Իմ կարծիքով եղած կանոնադրութիւնը վատ չէ. մարդիկ լաւ չեն հասկանում իրենց դերը և ծագում են թիւրիմացութիւններ։ Պէտք է պահպանուի կանոնադրութիւնը այնպէս, ինչպէս որ կայ. պէտք է լինեն 2 մարմիններ՝ Վարչութիւն և Խմբ. մասնաժողով։

Թումանեան. Վարչութեան իմ դրած հարցերի պատասխանը ես գտնում եմ անբաւարար։ Զիթունու գիրքը ընդունուել և հօ է ուղարկուել, որովհետև մեծ գումար էր պահանջւում. եթէ փող չունիք, ինչո՞ւ էիք ընդունում. այս գիրքը աւելի առաջ էր ուղարկուած, քան Նար-Դոսի «Մահը», դրանից յետոյ էլ հրատարակեցիք ուրիշ շատ գրքեր, իսկ Զիթունու գիրքը հօ էք ուղարկել։ Ա-Դոյի գրքի վերաբերութեամբ, ինչպէս լսել եմ, ընդունել էք և յետոյ էք գրել հեղինակին, թէ կան թերութիւններ։ «Հայ Գրողները» ես ներկայացրի, թէև իմ գիրքը չէ. ընդունւում է, նրանից յետոյ թուղթ ենք ստանում, թէ միջոց չունենք։ Այս բոլորի մէջ էնքան վիրաւորական և էնքան սառցնող բան կայ, որ էլ չի կարելի ասել. և մի՞թէ էսպէս պէտք է վիրաւորենք աշխատողին, գրողին կամ թարգմանչին, էդ մարդկանց հետ էդպէս չէ կարելի վարուել։ Եղածը լաւ չէ, պէտք է մի հրահանգ մշակենք։ Այս դէպքում Վարչութեան խօսքը էնքան էլ նշանակութիւն չունի. հրապարակում եղած գրողների և թարգմանիչների հետ այսպէս վատ էք վարուել, յետոյ ի՞նչ կլինի։

Աբգարեան. Երբ Ա-Դօն հրատարակում է մի գիրք, ինքն է պատասխանատու նրա ամեն մի թերութեան համար. բայց երբ Ընկերութեանն է ներկայացնում և սա էլ մատնացոյց է անում նրա աշխատութեան որոշ թերութիւնների վրայ՝ իրաւունք չունի նեղանալու։ Վարչութեան վարմունքը ես գտնում եմ արդարացի։ Տեսանք որ յետոյ հրապարակով եղան քննադատութիւններ և ցոյց տուին, որ դա ստատիստիկայ չէ, այլ տեղեկութիւններ. այդտեղ միայն թուերի հարցը չէր, այլ սիստեմի. պէտք է փոխէր և ոչ թէ նեղանար։

Լիսիցեան. Ըստ կարգի հարց եմ դնում, թէ արդեօք եղած բացատրութիւնները բաւարարութի՞ւն են տալիս թէ ոչ. Հրատ. Ընկերութիւնը այդ վերոյիշեալ հարցերի վերաբերմամբ ձեռ պաշտպանե՞լ է թէ ոչ։

Լեօ. Խմբագրական Մասնաժողովի իրաւունքը ես ընդունում եմ. հարկաւոր է եղել հայերի համար մեծ թուեր ցոյց տալ, բայց Ա-Դոյի գրքի մէջ պակաս է երևում. արդար չէ և այն, թէ սիստեմ չկայ նրա մէջ. հեղինակը ինքը ճանապարհորդել է և անձամբ այդ ամենը ստուգել։



Աբգարեան. Ես թուերի մասին չեմ խօսում. գիտնական գործ չէ, դա ստատիստիկա չէ։

Գիւտ ա. քահանայ. Խմբ. Մասնաժողովը Ա-Դոյի ներկայացրած աշխատութիւնը գտել է արժանաւոր։ Մասնաժողովի անդամներից մէկն ասել էր՝ ունի թերութիւններ. արձանագրութիւնը ուղարկուել է Վարչութեանը, որ եթէ նա էլ համաձայն է, որ կան այդ թերութիւնները, ուղարկէ հեղինակին և խնդրի, որ, եթէ ինքն էլ համաձայն է, ուղղի այդ թերութիւնները։ Վարչութիւնը յայտնել է, որ միջոցներ չունի տպելու, թէև գտնում է հարկաւոր աշխատութիւն այդ ուղղութիւններով։

Մարգար. Այս ձևի վիճաբանութիւնները ապարդիւն եմ համարում. կընշանակէ ընդհանուր ժողովը իր ձեռքն է առնում թէ Վարչութեան և թէ Խմբ. Մասնաժողովի իրաւունքները. այստեղ այս կամ այն գրքի մասին խօսք չպէտք է լինի. պէտք է խօսել թէ ինչ տեսակ գրքեր պէտք է ունենանք և ընտրել այնպիսի Վարչութիւն, որ գործէ կանոնադրութեան սահմաններում, իրագործելով ընդ. ժողովների որոշումներն ու ցանկութիւնները։ Այժմ մի մեծ գիրք է ուղարկուած, որի տպելու համար կպահանջուի մօտ 3,000 րուբլի. եթէ Վարչութիւնը քննի, տեսնի, որ ցանկալի է տպել և գրէ հեղինակին, որ թէև հարկաւոր աշխատութիւն է, բայց միջոցներ չունենք տպելու, մի՞թէ յանցանքը Վարչութեանն է կամ մերը. յանցաւորը հայ հասարակութիւնն է, հայ ազգն է։

Դեմիրչեան. Ընդ. ժողովում գրքերի արժանիքների կամ թերու-
թիւնների մասին խօսք չպէտք է լինի. գրքերը այստեղ չպէտք է քննուեն.
սխալների և վարձատրութեան չափի մասին պէտք է խօսք լինի հեղինակ-
ների հետ և ոչ ընդ. ժողովում. բայց երբ մի գիրք ընդունւում է Խմբ.
Մասնաժողովի և Վարչութեան կողմից և յայտնւում հեղինակին, թէ ըն-
դունուած է՝ պէտք է անպատճառ տպուի և ոչ թէ այնպէս, ինչպէս եղաւ
«Հայ Գրողներ»-ի մասին. յայտնում են, թէ ընդունուած է և վերջը չի
տպւում։ Մի մասնաւոր մարդ ուզում էր այդ գիրքը տպել, հեղինակները
կամեցան, որ այս Ընկերութիւնը տպէր, բայց վերջը դուրս եկաւ, որ այդ
գիրքը չտպուեց, մինչդեռ հրապարակի վրայ այդ գրքի պահանջը կայ։ Հե-
ղինակի հետ բանակցելու ժամանակ ամեն տեսակի պայմաններ, հանգա-
մանքներ պէտք է գրել—պարզել, մինչև ընդունելը։ Աւելի յարմար եմ գտ-
նում այստեղ քննուի 2 մարմինների յարաբերութեան հարցը, որպէսզի
ստեղծուի կորեկտ յարաբերութիւն թէ այդ 2 մարմինների և թէ հեղի-
նակների մէջ։ Արդարացի եմ գտնում պ. Թումանեանի ասած հեղինակի
բարոյական վնասը։

Ղազարեան. Ճիշտ է, գրքերը այստեղ չպէտք է քննել, բայց այդ
անախորժ դէպքերը այստեղ պէտք է չեշտուեն։ Իմ կարծիքով Ա-Դոյի և
Զիթունու գրքերը պէտք է աշխատել տպել. այդ տեսակ աշխատութիւնների
կարիքը մեր մէջ զգացւում է. մեր ժողովուրդը ուսումնասիրուած չէ, շատ

անգամ օտար աղբիւրների ենք դիմում։ Նախանցեալ ժողովը ցանկալի համարեց ունենալ և քննադատական գրքեր։ Ցանկալի սերիայի համար մինչև անգամ պէտք է կոչ անել կամ դիմել ձեռնհաս անձանց. մի խօսքով պէտք է աշխատել միջոցներ գտնել տպելու այդ տեսակ գրքեր։

Նախագահ. Քանի որ այստեղ խօսք եղաւ Մարտ. Յարութիւնեանի թարգմանութեան մասին, թէև ես հակառակ եմ, բայց քուէարկութեան եմ դնում՝ վերաքննե՞լ այդ հարցը թէ ոչ։ Ժողովը որոշում է չվերաքննել. ձեռնպահ է Խմբ. Մասնաժողովի անդամ Հ. Գիւտը։

Նախագահ. Ա-Դոփ, Զիթունու և Հայ Գրողների մերժման պատճառը եղել է այն, որ միջոցներ չեն եղել։ Խմբագրական Մասնաժողովը Վարչութեանը պէտք է ասի, թէ ընդունուած նիւթերից որն է աւելի կարևորը, համեմատական չափով ցանկալին, որ եղած միջոցներով կարելի լինի տպել։ Խմբագր. Մասնաժողովի անդամները պարտաւոր են կարդալ, քննել նիւթը, իսկ Վարչ. անդամները՝ ոչ, դրանք ընդունուած գրքերը պէտք է տպեն և տարածեն. եթէ Վարչ. անդամները փոփոխում են Խմբ. Մասնաժողովի որոշումները՝ դա աննորմալ է։ Ինչպէս երևում է՝ ցայժմ խախտուել է կանոնադրութիւնը, Վարչութիւնը իր իրաւունքներից դուրս է եկել։ Այստեղ արտայայտուած կարծիքների հիման վրայ առաջարկում եմ հետևեալ բանաձևերը.

1. Բաւարա՞ր են Վարչութեան բացատրութիւնները այդ մի քանի գրքերի մերժման նկատմամբ թէ ոչ.

2. Ընտրել մի յանձնաժողով քննելու այդ մի քանի թիւրիմացութիւնները, և

3. Վարչութիւնը այսուհետև յանձնարարի Խմբ. Մասնաժողովին աւելի կարևոր նիւթերի ցանկը կազմի։

Մի քանիսը խօսում են երկրորդ բանաձևի դէմ։

Յարութիւնեան Իս. Խմբ. Մասնաժողովի և Վարչութեան մէջ ամբողջ տարի կռիւ ենք մղել. այժմ պէտք է որոշել թէ դրանցից որի՞ տեսակէտն է ուղիղ։

Վալադեան. Վերջերս այդ թիւրիմացութիւնները վերջացել են։

Նախագահ. Նիւթերից որը պէտք է առաջ տպուի, որը յետոյ՝ դա Խմբ. մասնաժողովի իրաւունքն է, Վարչութիւնը մինչև այժմ սխալ է հասկացել։

Թումանեան. Երբ Վարչութիւնը դուրս է եկել իր իրաւասութիւնից, պարզ է, որ առաջ կգային որոշ թիւրիմացութիւններ և անհաճոյ դէպքեր. պէտք է գործել կանոնադրութեամբ, ուրեմն հրաւիրել Վարչութեանը, որ նա գործի կանոնադրութեան սահմաններում։

Երզնկեան. Ընկերութեան բարձր օրգանը Վարչութիւնն է. սա իր իրաւունքի մի մասը՝ նիւթեր ընտրելու պարտականութիւնը տալիս է Խմբ. մասժ.-ին։ Դրանց Խառն ժողովը կարող է որոշել հերթը. նիւթերի հերթը այս կամ այն մարմնին տալը ցանկալի հետևանքներ չի ունենայ։

Թերզիբաշեան. Այդ 2 մարմիններից գլխաւորը Վարչութիւնն է. նա տէր է. նա պէտք է տայ գործին ցանկալի ուղղութիւնը. Խմբ. մաս-ը մի օժանդակիչ մարմին է։



Խարազեան. Վարչութիւնն ու Խմբ. Մասնաժողովը մի հրահանգ կազմեն և ներկայացնեն Ընդ. ժողովին։

Նախագահը քուէարկութեան է դնում հետևեալ բանաձևերը.

1. Վարչութիւնը իր գործունէութեան ընթացքում ուղի՞ղ է ընթացել ժողովի մեծամասնութեան կարծիքով՝ ոչ։

2. Վարչութիւնը զանազան հարցերի նկատմամբ դուրս է եկել իր իրաւասութիւնից խախտելով կանոնադրութիւնը. այս առաջարկը անցաւ։

3. Ընտրել յանձնաժողով 2 մարմինների յարաբերութիւնները պարզելու։ Մերժուեց։

Լիսիցեանը առաջարկում է, քանի որ իրաւասութեան սահմանները որոշած չեն՝ ընդհանուր գործունէութեան ծրագիրը և տպագրելու հերթը, մանաւանդ երբ գումարները չեն բաւականանում՝ յանձնուի Խառն ժողովին։ Մերժւում է։

Նախագահը քուէարկում է Յոբ. Յանձնաժողովին տուած 250 րուբլու հարցը. Ժողովը որոշում է աշխատել յետ ստանալ։

Միւս հարցերի քննութիւնը յետաձգուեց։

Նախագահ՝ Տ. Յովհաննիսեան

Քարտուղար՝ Խորէն Քահ. Խուցեան

## V

1913 Թուի մայիսի 19-ին կայացաւ Հայոց Հրատարակչական Ընկ. ընդհանուր ժողովի շարունակութինը՝ նախագահութեամբ պ. Տ. Յովհաննիսեանի. ժողովի սկզբում ներկայ էին 29 անդամներ։

Պ. Նախագահը նիստը բանալով կարդում է մնացած հարցերի ցուցակը. ժողովականների ցանկութեամբ դրուեց Ընկերութեան 1912 Թուի տեղեկագրի քննութիւնը։ Ժողովականները նկատեցին հաշուապահական սխտեմի սխալներ և միքանի Թերութիւններ. ժողովը հաստատելով Վարչութեան ներկայացրած հաշիւը՝ ցանկութիւն յայտնեց, որ ապագայում Տեղեկագիրը կազմուի ըստ հնարաւորութեան անթերի։

Քննուեցին Բագուի և Ալեքսանդրապոլի ընկերութեան ճիւղերի 1912 Թուի հաշիւները, որոնք զետեղուած են Ընկերութեան Տեղեկագրի մէջ։ Բագուի ճիւղի հաշիւը շատ համառօտ է։ Այս ճիւղի աղքատ գործունէութիւնը առիթ տուեց քննութեան առնելու նրա պատճառները։ Մեր կանոնադրութիւնը ճիւղերին աւտոնոմիա չէ տալիս. չունին առանձին խմբ. մասնաժողովներ. ամեն անգամ որևէ նիւթի հրատարակութեան համար պէտքէ կենտրոնին դիմեն և Թոյլտուութիւն ստանան։ Այնպէս որ ճիւղը զուրկ է ինքնուրոյն գործելու իրաւունքից. այս հանգամանքը համարւում է ամենագլխաւոր պատճառը Բագուի ճիւղի այդօրինակ չնչին գործունէութեան. բացի դրանից Բագւում չէ նկատւում գործելու տրամադրութիւն։ Ժողովը ցանկութիւն յայտնեց, որ Վարչութիւնը միւս անգամ մի զեկուցում բերէ Թէ Բագուի և Թէ առհասարակ ճիւղերի Թուլութեան պատճառների և Թէ ինչ միջոցներով կարելի է արդիւնաւորել ճիւղերի գործունէութիւնը։

Ընդհանուր ժողովը վերոյիշեալ 2 ճիւղերի հաշիւները հաստատելով՝ ցանկութիւն յայտնեց, որ ուրիշ անգամ հաշիւների հետ ուղարկուեն նաև վերաստուգիչ յանձնաժողովի զեկուցումները։

Վարչութիւնը զեկուցեց, որ դիմում է եղել Վլադիկաւկազից 13 հոգու ստորագրութեամբ և Կաղզուանից 12-ի ստորագրութեամբ, ծանօթ և վստահելի անձերի կողմից և խնդրում են Թոյլտուութիւն՝ ճիւղեր հիմնելու։ Ընդհանուր ժողովը, կանոնադրութեան 43 յօդ.-ի հիման վրայ, հաճութեամբ Թոյլատրեց։

Վարչութեան անդամ բժ. պ. Մինասեանը զեկուցում է, որ Վարչու-



Թիւնը ցանկանալով գիւղերում և առհասարակ գաւառում իր հրատարակութիւնները տարածել, այդ մտքով դիմում է արել գիւղական Մանր վարկի և կօօպերատիւ ընկերութիւններին, որոնք սիրով ընդունել են՝ աջակցել Ընկերութեանը այդ գործում։ Սակայն քանի որ այդ Մանր վարկի և կօօպերատիւ ընկերութիւնների կանոնադրութիւնից չէ բղխում այդ գործը (գրքեր տարածելը), որ Վարչութիւնս վստահանայ՝ ապա ուրեմն մնում է այդ ընկերութիւնների վարիչներին յանձնել որոշ քանակութեամբ գրքեր միմիայն անձնական վստահութեամբ. դրա համար Վարչութիւնս դժուարանում է իր պատասխանատուութեամբ այդ անել և դիմում է Ընդհանուր ժողովին Թոյլ տալու, որ մեր հրատարակութիւններից 2—3 օրինակ գրքեր ուղարկուեն։

Ընդհանուր ժողովը գտնելով, որ Կովկասում գործում են 80-ի չափ յիշեալ տիպի հիմնարկութիւններ. և նրանց վարիչները մեծ մասամբ ինտելիգենտ և վստահելի մարդիկ են, լիազօրում է Վարչութեանը ըստ իր հայեցողութեան ուղարկել դրանց հարկաւոր չափով գրքեր՝ տարածելու գիւղացիների մէջ։ Ի միջի այլոց առաջարկ է լինում շրջիկ գրավաճառներ ունենալու մասին. Վարչութիւնը պատասխանում է, որ ինքն այդ ուղղութեամբ ջանքեր գործադրել է. բայց վստահելի մարդիկ չգտնելով չի յաջողուել կազմակերպել։

Առաջարկ է լինում ուսուցիչներին գրքերի գնի մեծ զեղչ անել. Ընդհանուր ժողովը մերժելով այդ, ցանկալի է համարում աշխատել հնարաւոր չափով էժանացնել Ընկերութեան հրատարակութիւնները։

Ապա զեկուցում է տալիս Գիւտ ա. քահ. Աղանեանը Հիւս. Կովկաս և Ռուսաստան յօգուտ Ընկերութեան կատարած իր ճանապարհորդութեան մասին, որի համար ընդհանուր ժողովը յայտնում է իր շնորհակալութիւնը Թէ Վարչութեանը և Թէ Տէր-հօրը։

Դրւում է մանկական գրքերի հրատարակութեան մասնաժողովի ընտրութեան հարցը։ Նախկին ընդհանուր ժողովը սկզբունքով որոշած լինելով ընտրել յատուկ մասնաժողով, ժամանակաւորապէս նրա պարտականութիւնները դրել էր Խմբագրական Մասնաժողովի վրայ։ Թեր ու դէմ խօսակցութիւններ տեղի ունեցան յատուկ մասնաժողովի ընտրութեան շուրջը. Ոմանք քուէարկութեամբ որոշուեց հարցը քննութեան դնել ըստ էութեան։ Ոմանք գտնում էին, որ անհրաժեշտ է յատուկ մաս. ընտրել, ոմանք էլ դա աւելորդ էին համարում. ժողովը 17 ձայնով ընդդէմ 12-ի որոշեց մանկական գրքերի ընտրութիւնը Թողնել Խմբ. Մասնաժողովին։

Դրուեց հերթով դուրս գնացող և հրաժարուող Վարչութեան 3 անդամի փոխարէն նորերի ընտրութեան հարցը։ Սրան զուգընթաց կարդացուեց Վարչութեան ամբողջ կազմի հրաժարականը, որի մէջ յայտնում է, Թէ քանի որ անցեալ ընդհանուր ժողովն իրան անվստահութեան քուէ է տուել, ուստի ինքը բարւոք է համարում, առանց մանրամասն բացատրութիւնների մէջ մտնելու, ամբողջ կազմով հրաժարական տալ։ Ժողովականներից ոմանք գտնում էին, որ անցեալ ընդհանուր ժողովից յետոյ Վար-

չութեան կողմից այլ վարմունք սպասելի չէր։ Անցեալ անգամ Ընդհանուր ժողովը Վարչութեան իրաւունքները մինիմումի հասցնելով՝ դրել էր նրան մի գործակատարի վիճակում, որ միայն նիւթական միջոցը հայթայթէ և ինչ որ Խմբ. Մասնաժողովը բարւոք համարէ՝ տպել. Վարչութիւնը առանց իր կարծիքն ունենալու, պէտք է հրատարակէ։ Ոմանք էլ աւելացնում էին, որ անցեալ տարուանից Վարչութեան և Խմբագրական Մասնաժողովի յարաբերութիւնները վատացել էին և նրանք երկար չէին կարող միասին գործել։ Ընդհանուր ժողովը լսելով Վարչութեան ամբողջ կազմի հաւաքական հրաժարականը և այդ առթիւ տեղի ունեցած թեր և դէմ բացատրութիւնները, որոշեց. 1) Մօտ ապագայում գումարել արտակարգ ընդհանուր ժողով՝ կանոնադրութեան փոփոխութեան համար, Վարչութեան և Խմբագրական Մասնաժողովի իրաւունքներն ու փոխ-յարաբերութիւններն որոշելու և 2) Խնդրել, որ Վարչութեան անդամները շարունակեն իրենց պաշտօնավարութիւնը մինչև այդ արտակարգ ընդհանուր ժողովը այն պայմանով, որ Վարչութեան և Խմբագրական Մասնաժողովի մէջ ծագած բոլոր թիւրիմացութիւնները քննուեն և վճռուեն Խառն ժողովներում։

Խմբագրական Մասնաժողովի հրաժարուած 3 անդամների (պ. պ. Տ. Գիւզալեանի, Ա. Աբեղեանի և Ա. Յարութիւնեանի) փոխարէն՝ ժողովը գաղտնի քուէարկութեամբ ընտրեց պ. պ. Դեմիրճեանին (15 այո, 5-ը ոչ), Սուրխաթեանին (14 այո, 6-ը ոչ) և Ե. Ֆրանգեանին (12 այո, 8-ը ոչ), իսկ պ. Ն. Սարգսեանին Խմբ. Մասնաժողովի փոխ-անդամ։ Վերստուգիչ մասնաժողովի անդամութեան համար վերընտրուեց հին կազմից պ. Թերզիբաշեանը, իսկ նոր ընտրուեցին պ. պ. Խարազեան Ս. և Ղազարեան Ս.։ Ժողովի վերջում ընդհանուր ժողովը շնորհակալութիւն յայտնեց պ. Տ. Յովհաննիսեանին այս 3 նիստերին նախագահելու համար։

Նախագահ՝ Տ. Յովհաննիսեանց

Քարտուղար՝ Խորէն քահ. Խուցեան

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

1913 դեկտեմբերի 1-ին նշանակուած Կովկասի Հայոց Հրատարակչական Ընկերութեան արտակարգ Ընդհանուր Ժողովին ներկայ էին 12 հոգի. Կանոնադրութեան § 23-ի հիման վրայ ժողովը կանոնաւոր էր, եթէ մասնակցէին 100 հոգի, այն է՝ Թիֆլիս գտնուած անդամների ⅓ մասը, ուստի և ժողովը չկայացաւ, այլ յետաձգուեց դեկտեմբերի 8-ին առաւօտեան 11 ժամին։

Վարչութեան նախագահ՝ բժ. Ա. Զարզարեանց

## VII

1913 թուի դեկտեմբերի 8-ին, ցերեկուայ ժամը 12-ին, Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան Ընթերցարանի դահլիճում կայացաւ Կովկասի Հայոց Հրատարակչական Ընկերութեան երկրորդ արտակարգ Ընդհանուր Ժողովը: (Առաջին ժողովը, անդամների օրինական թիւ չըլինելու պատճառով, չէր կայացել նախորդ կիւրակի օրը): Ընկերութեան Վարչութեան նախագահ բժ. Զարգարեանը՝ ներկայ եղող անդամների թիւը գտնելով կանոնադրութեան համաձայն օրինական՝ բաց արաւ ժողովը և առաջարկեց Ընդհանուր Ժողովի համար ընտրել Նախագահ և քարտուղար: Նախագահ ընտրուեց պ. Յովհ. Թումանեան, իսկ քարտուղար՝ պ. Յ. Աղաբաբ: Նախ քան օրակարգի հարցերին անցնելը, Նախագահի առաջարկութեամբ յոտնկայս յարգուեցին հանգուցեալներ՝ Ս. Զաւարեանի, Քալանթարի և Խատիսեանի յիշատակները:

Ժողովի զբաղման գլխաւոր առարկան Կանոնադրութեան մի քանի կէտերի փոփոխման և վաւերացման խնդիրն էր, որը անցեալ տարուան Ընդհանուր ժողովի որոշման համաձայն յանձնուել էր Վարչութեանը բարեփոխելիք կէտերը մշակելու և Ընդհանուր Ժողովի նիւթ դարձնելու: Ընդհանուր Ժողովի յանձնարարութեան համաձայն՝ Վարչութիւնը մշակել էր Կանոնադրութեան մի քանի կէտերը և փոփոխուած յօդուածները՝ կանխապէս տպագրած ցրուել էր Ընկերութեան անդամների մէջ:

Ժողովը այդ յօդուածները քննելուց առաջ՝ լսեց անցեալ տարուայ վերջին Ընդհանուր Ժողովի արձանագրութիւնը: Ընթերցումից յետոյ պարզուեց, որ ոչ այդ արձանագրութիւնը և ոչ էլ յիշեալ ժողովի շարունակութիւն կազմող երկու արձանագրութիւնները ստորագրուած չեն այդ ժողովների Նախագահի կողմից:

Խարազեան.—Ընդհանուր Ժողովի կողմից չըստորագրուած արձանագրութեան ընթերցումը գտնում է անկանոն և առաջարկում է դադարեցնել և անցնել օրակարգի խնդիրներին: Տեղի են ունենում թեր ու դէմ կարծիքներ. ոմանք ցանկանում են կարդալ, ոմանք՝ ոչ:

Բժ. Մինասեան.—Յայտնելով որ օրակարգի լուսաբանման տեսակէտից՝ այդ արձանագրութիւնների ընթերցումը կարեւոր է՝ առաջարկում է կարդալ, պատճառաբանելով, որ այդ արձանագրութիւնների մէջ վիճաբանու-



թեան ձեւով պարզուած են այն բոլոր մանրամասնութիւնները, որոնց հիման վրայ տեղի են ունեցել կանոնադրութեան յօդուածների ներկայ փոփոխութիւնները:

Խարազեան.—Բժ. Մինասեանի պատճառաբանութիւնը գտնում է անբաւարար. նա ասում է, որ մի այնպիսի լուրջ գործի համար՝ որպիսին է կանոնադրութեան փոփոխութիւնը, Ընդհանուր Ժողովի արձանագրութիւնները չեն, որ ժողովականներին պէտք է ծանօթացնեն յօդուածների փոփոխութեան պատճառների հետ, այլ՝ դրա համար պէտք է Վարչութիւնը յատուկ զեկուցում ունենայ մեզ ծանօթացնելու համար:

Գր. Վարդանեան.—Պատասխանելով Խարազեանի յարուցած խնդրին՝ մատնանշում է տպագրուած ու ժողովականների մէջ ցրուած թերթիկների վրայ, որոնք մանրամասնաբար յիշատակում են այն կէտերը, որոնք նախորդ Ընդհանուր Ժողովում պատճառաբանուած և գտնուած են փոփոխութեան արժանի:

Նախագահ.—Հարց է տալիս Վարչութեան անդամներին՝ թէ կանոնադրութեան փոփոխուած կէտերի մասին գրաւոր զեկուցում ունեն տալու ժողովականներին: Պարզւում է, որ Վարչութիւնն ի նկատի ունենալով նախորդ ժողովների մանրամասնօրէն կազմուած արձանագրութիւնների ընթերցումը, գրաւոր զեկուցում չէ պատրաստել. իսկ եթէ ցանկալի կը համարուի յատուկ զեկուցման՝ այն ժամանակ Վարչութեան անդամները պատրաստ են բանաւոր կերպով զեկուցելու: Թեր ու դէմ կարծիքներից յետոյ՝ ժողովը որոշում է չըկարդալ անստորագիր արձանագրութիւնները և լսել Վարչութեան անդամների բանաւոր զեկուցումները: Խօսում է Գր. Վարդանեան:

Գր. Վարդանեան.—Գտնում է, որ Ընկերութեան կանոնադրութիւնը կազմուած է անհեռատես կերպով, որի ապացոյցները յիշատակուած են նախորդ ժողովների մէջ և գրի առած այդ ժողովների արձանագրութիւնների մէջ, հենց այդ պատճառների հիման վրայ, Ընկերութեան երկու գործօն մարմիններին՝ Վարչական և Խմբագրական կազմերին տուած է անհաւասար իրաւունքներ: Խմբագրական մարմնի որոշումները՝ տպագրուելիք գրքերի վերաբերմամբ, ըստ կանոնադրութեան պէտք է գործադրուեն լռելեայն Վարչութեան կողմից, որը սակայն շատ անախորժութիւնների տեղիք է տալիս: Վարչութեան և Խմբագրական մարմինների մէջ եղած այսօրինակ յարաբերութիւնները անբնական են. Վարչութիւնը առանց հիմունքների զրկուած է ձայնի իրաւունքից տպագրուելիք նիւթերի ընտրութեան գործում: Մինչ այդ, որովհետև տպագրուած գրքերի պատասխանատուութիւնը հասարակութեան առաջ ընկած է Վարչութեան վրայ, հենց այդ պատճառով էլ անխուսափելի է այդ երկու մարմինների միացումը: Երբ՝ ներկայ բարեփոխուած սկզբունքային կէտով՝ Ընկերութիւնը կունենայ մի գործօն մարմին, մի խորհուրդ, այն ժամանակ մէջտեղից կըվերացուին այն բոլոր թիւրիմացութիւնները, որոնք շարունակ տեղի են ունեցել Հրատարակչական Ընկերութեան մէջ իր գոյութեան օրից, որովհետև Խորհրդի մէջ զեկուցող գրքերի մասին առաջ կը գան նաև վաճառուելիք խնդիրների մասին որոշ կար-

ծիքներ և ըստ այնմ կը որոշուեն՝ թէ ընտրուած դիրքը արժէ՞ տպագրել թէ՝ ոչ։

